

**ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇԻ ԹՈՒՂԹԸ ՖԼՈՐԵՆՏԻՈՅ
ԺՈՂՈՎԻ ԱՌԹԻՒ.**

Մկրտիչ Նաղաշ կամ «նկարագիր» ժԵ. դարու հայ եկեղեցականութեան նշանաւոր դէմքերից մէկն էր, ծնուած Բաղէշի Պոռ զիւղում։ Պատանեկութիւն հասակում արդէն գրաւել էր ժամանակակիցների ուշադրութիւնը, որպէս «քաջ քարտուղար», անհամեմատ նկարող և ամենայն արհեստից ճարտարապետ . . . »։ * Նորանկարչական ձիբքի մասին ապացոյց է ոչ միայն «Նաղաշ» մականունը, այլ և Միւնխենի մատենադարանի հայ ձեռագիրներից մէկի յիշատակարանը, ըստ որի Մկրտիչ Ամթայ արքեպիսկոպոսը նկարագարդիլ է մի ժամագիրք, թէև ոչ գեղարուեստական, ըստ վկայութեան հ. Գալէմքարեանի^{**}։ Ժամանակակիցների աշքում յայտնի էր անշուշտ, նաև իբրև երգիչ, թէև չունինք այդ մասին յատուկ աղբիւր։

Մկրտիչ Նաղաշ Պէթ=1430թ. Կոստանդին Վահկացի կաթողիկոսի կողմից ձեռնադրում է Ամիդի և Միջագետքի արքեպիսկոպոս և հաստատում, ըստ կենսագրի, «ի վերայ 24 դաւադանի»։ Մի ուրիշ յիշատակարան աւելի պարզում է Մկրտիչ Նաղաշի դիբքը և յարաբերութիւնը կաթուղիկոսի հետ. «. . . Գրեցաւ . . . աւետարանս . . . ի հայրապետութեան տեառն Կոստանդնի Վահկեցոյ և ի վերադիտողութեան Ամիթ Շահաստանի տեառն Մկրտչի աստուածաբան վարդապետի և արքեպիսկոպոսի ամենայն Միջագետաց և երիցփոխանի կաթուղիկոսի ամենայն Հայաստանեայց և մինչ ի ծայրս արևելեան իշխեցողի . . . »։ ***

Մկրտիչ Նաղաշ գրաւել էր նաև ժամանակի հոգրների ուշադրութիւնը. Միջագետքի Շահ Օթման և նորա որդին Համզա Սուլթանները բացառիկ յարգանք էին ցոյց տալիս դէպի նորա անձնաւորութիւնը. Մկրտիչ Նաղաշ շատ լաւ շահագործում էր նրանց բարեհաճութիւնը յօգուտ հօտի և ի պայծառութիւն եկեղեցու։

* Փիրդալէմեան. Խօսարք Հայոց 36. Ալիշան Հայապատ. 571.

** Հ. Գալէմքարեան. Ցուցակ 19. 24. Կոստանեան. Մկրտիչ Նաղաշ. թ.

*** Ալիշան. Հայապատում 572. Արցախ. Մակար եպս. Բարխուդարեանի. Բաղու, 1895. եր. 544.

իւր շինարարութեամբ և հայրական, սրտացաւ հողատարութեամբ զրաւել էր նաև հօտի ճշմարիտ սէրը, Թոռոցիկ այս մի քանի ակնարկները մեզ համար հասկանալի են դարձնում թղթի ծագման պատճառները: Կոստանդին վահկացին եւկենիոս պապից հրաւէր ստանալով Երուսաղէմի Եսայի արքեպիսկոպոսի միջնորդութեամբ, մասնակցելու Թլորենտիոյ ժողովին, ընականարար պէտք է դիմէր Նաղաշի խորհրդին, որ արևելքի ամենից հեղինակաւոր եպիսկոպոսն էր և իւր տեղակալը:

Թղթի համառօտ բովանդակութեան մասին մենք տեղեկութիւն ունէինք Զամչեանի բերած քաղուածներից միայն: Բայց բնագրի հրատարակութեամբ ոչ միայն ամբողջական գաղափար, այլ և մի քանի նորութիւններ ենք ստանում: Վերնագրից և թղթի վերջում եղած մակադրութիւնից տեղեկանում ենք, որ Նաղաշ այս թուղթը գրելէ «Հրամանաւ տեառն ի. Իոյ Կոստանդին պատրիարքի և քաջ(s) ախոյեանին և անյաղթ փիլիսոփային Թումա բարունապետի, արևելեան հռետորի, ...»: Այսաեղ յիշուած Թուման՝ Մեծոփեցին է: Եթէ վերնագրիր հեղինակինը չհամարենք, նոյնը չենք կարող ասել մակագրութեան մասին՝ թղթի վերջում: Տարաբաղդաբար մենք մանրամասնութիւններ չունինք, թէ ինչու Նաղաշ ողէտք է նաև Թումա Մեծոփեցուց հրաման ստանար գրելու: Բայց անհասկանաւի չէ այս իրողութիւնը: Թումա Մեծոփեցին արևելեան վարդապետների մէջ ամենից հոչակաւորն էր այդ ժամանակ իւր զիտութեամբ: Կիլիկիցիք ամենայն հաւանականութեամբ յարաբերութեան մէջ էին նորա հետ, և զիտէին նորա հոչակը աւելի փառ, քան սկսուեցաւ արծարծուել Աթոռի փոխադրութեան խողիրը Ժամանակակից յիշատակարանները, Թումայի կամ ուրիշների ձեռքով գրուած, միանգամայն պարզում են նորա հեղինակաւոր զիրքը արևելեան վարդապետների մէջ, և Կիլիկիայի հետ ունեցած կապը*: Հաւանօրէն Կոստանդին կաթուղիկոսը դիմել էր և Մեծոփեցու խորհրդին: Վերջինս իւր կողմից Նաղաշի մօտ է ուղարկում իւր աշակերտներից մէկին, որ և Նաղաշի հետ մակադրում է այս թուղթը: «Ե ես Յոհանէս Կաֆացի բացասութեամբ արեղայի և սպասաւոր ուղիղ քանի տռ ոտս Թումա վարդապետի . . .»: Մեզ չպէտք է շիրթէ Կաֆացի արեղայի ներկայութիւնը Մեծոփայ վանքում: ուրիշ աղքիւրներից ևս տեղեկութիւն ունինք՝ որ Կաֆացի երիտասարդներ գալիս էին արևելեան մեծ վարդապետների մօտ ուսանելու: Բայտ յիշատակարանների սերտ յարաբերութիւն կար Հայստանի և Կաֆացի, նոյնիսկ Կիլիկիայի և Կաֆայի մէջ: Հէնց

* Տես մեր աշխատութիւնը, Թումա Մեծոփեցու կեանքը, Պաղաքապատ. 4944. ԽԱ.

Կոստանդին Վահկացին ինքը 1413 թուականին՝ եպիսկոպոս ժամանակ եղել է բաֆայում*:

Բնագրի հրատարակութեամբ ուղղուում է նաև Զամչեանի մի սխալը: Ըստ Զամչեանի Նաղաշն այդ թուղթը գրել է 1436 թ., բայց մակագրութիւնը կասկածի ոչ մի տեղիք չէ թողնում, որ 1438 թուի մայիսի 16-ին է գրուած: Զամչեան շփոթել է ամենայն հաւանականութեամբ ՊԶԵ և ՊԶԷ թուականների եւ և տառերը, կամ գուցէ գրիչն է շփոթել և Զամչեանի սխալ-ման պատճառ դարձել**: Թէև Նաղաշի մէջ բերած թուականներից մի քանիսը սխալ են, բայց գրկչական և հայ թուականները միանգամայն համապատասխան են իրար և փոխագարձարար հաս-տատում են թղթի գրութեան տարին:

Ի վերջոյ մեզ թւում է, թէ բնագիրը առանց զեղծման չէ հասել մեր ձեռքը: Մի քանի նախադասութիւններ միանգամայն անյարիր են բնագրի շարունակութեան, և ըստ մեզ զեղծա-րար ձեռքով ներմուծուած: Նաղաշ իւր թղթի ամրողջութեան մէջ միանգամայն բացասական դիրք է բռնած դէպի միութեան խնդի-րը, բաժանման պատճառ համարելով Քաղկեդոնի ժողովը. ստո-րագծուած նախադասութիւնները ոչ միայն տրամարանական մի-ութիւն և անհրաժեշտութիւն չեն ներկայացնում բնագրի մէջ, այլ և կրկնութիւն են Սակայն այդ ներմուծութիւնը բաւական հին պիտի լինի. Զամչեանի օրինակն արդէն աղաւաղուած էր, ինչպէս երեսում է մէջ բերուած մի կտորից^{*}: Չեռաղիբների հա-մեմատութիւնը միայն կարող է պարզել խնդիրը վերջնականապէս:

Չեռաղիբը լիմ անսապատի սեպհականութիւն է, № 214 կա-շեկազմ, 13,4×9×4,2 սմ. մեծութեամբ, գրուած է թղթի վերայ, բոլորդրով 3^w—153^w, իսկ մնացածը նոտրգրով:

Բովանդակութիւնը հետեւալն է

ա) 3—8^w. Այս ինչ ի լուծմունս զրոց մեկնութեն Յովրա-Ցանկ է:

բ) 9^w—139^w. (Ն)որին (Գ)րիգորի (Ա)նյաղթ Փիլիսոփայի և քաջ հոհառորի (ա)շակերտին ևռամեծին (Յ)ոհաննու Որոտնեցոյ. (Հ)ամառաւտ լուծմունք գժուարիմաց բանից ի մեկնւ^{*}ի գրոցն Յովրա եւ ի բանս մեկնչաց.

Ակս. «Մաքուր եւ հոգևոր սիրոյ»...

* Մատ. Երուս. Զիւս. № 251, 522^w.

** Զամչ. Գ. 474.

զ) 139^թ—140^թ. Մեկնութեանս հեղինակի՝ Տաթևացու (139^թ
—140) և գրչի յիշատակարանը

դ) 143^ա—151^ա. Մեր թուղթը. «Յաւէտ ծայրացելոյ»...

ե) 153^թ—154^թ. Փիրղալէմեանի մի յիշատակարանը կենսա-
գրական տեղեկութիւններով.

«Ես Դւռնդ . . .

զ) 155^ա—573^թ. Համառաւտ լուծմունք ա՞ծաբանին ի լուսա-
ւոր բանից Վանական վ՞ղի. Յոհաննու Որոտնեցոյ հաւաքեալ աշ-
խատասիրութ աշակերտի նորին Գէորգեա Երգնկացոյ:

Տարբեր գրով.

Ակ. Առ որս բանիւ են պաճուճեալ . . .

է) 173^ր—183^թ. Նորին յաղագս հոգոյն

Ակ. Նորին յաղագս որդոյ . . .

լ) 183^թ—199^թ. Նորին յաղագս ա՞ծա՞բնութ՞ե
եւ զի արդ վ՞ս զի . .

թ) 199^թ—207^ա. Ճառ առ Կլաւդիան.
Կամիք ուսանել . . .

ժ) 207^ա—Գրիգորի աշկրի լ՞ծումն յՈրդոյ ճառն

ժա) 208^ա. Նորին Գրիգորի լուծումն Գ. ճառին
Ակս. բանն որ ասէ . .

ժբ) 208^թ—215^թ. Յաղագս ա՞ծաբանու՞ե ի սրբոյն Դիոնէսիոսէ
Ակ. Հարցումն. Զի՞նչ են անձառելի» . . . թերի

139^թ—140^ա. Տաթևացու յիշատակարանը Յովրայ լուծման
վերջում.

Եւ ժողովողն մեկնուե՞ս է Վանական վրդպտ, աշակերտ
Մխիթար վ՞րդտի, որ Գոշ անուանիւ. Եւ է սա վդ՞տն Վարդանայ.
Եւ Վարդան Ներսէսի և նա Եսանա վ՞դտին, որոց յիշատակն
ա՞նու՞թ եղիցի. ամէն:

Արդ ես վերջինս ի ծնունդս եկղց՞ոյ Գրիգոր մականուն
խնդրող բանի, որ և ի վաղուց հետէ փափաքէի բոլոր մեկնու՞ե
Յորայ: Եւ ի թուականութե՞ս հայոց ՊԾէ ամի եկեալ մեր յեր-
կիրս Քաջրերունի և ձմերեալ ի հ՞շկաբնակ վանքս Մեծոփայ ի
սպասու դանբարանաց վարդապետացն սրբոց և ընթերցմամբ հա-
ւաքիցի զդժուարալոյժ բանս Յորա և զմեկնչաց ն՞ու: Այլ սակաւ
ինչ լուծումն Արխտակիսի և Գէորգեա ի խրատս զրչու՞ե:

Ըսդ նմին և զքաղուածոյ մեկնութեն Յովիաննու աւ՞տրնչի
եւ ընձայեցի ի պատիւ ս՞ր տեղոյս ուսումնասէր անձանց ուղղա-
դաւան մտաց: Եւ ի զլիս՞ս բ՞ժնլով վ՞ս մտաւոր տհմւ՞ե եւ զարդ
ուսման ի ոլէտս բնմաց՞ւն եւ ի խրատս զրուցատրու՞են: Արդ
եթէ զացի ինչ ի սմա ը՞ս հաճոյից խնդրողաց տ՞ն շնհ՞օք և եթէ
ոչ այն՞պ շնրհք, և պակասն փոքրընկալ անաւղոյս մերոյ նե-

բեսցի: Որ և լուսաւոր վարժապետին մերոյ Յոհանու Որոտնեցոյն ի սմա մասն բարեաց յիշեալ եղիցի: Որ և մեզ յուսողաց և ձեզ յիշողաց ողորմու՞ի տ՞ն հասրեկեսցէ ամէն:

Այլ և աղաչեմ զմտերիմ գաղափարաւղս գրել զսակաւ յիշաւտակ մեր, և զու գրեալ լիջիր ի գիրն կենացն յաւիտենից. ամէն եղիցի, եղիցի:

140^{թ.} Սորան կցուած է բուն գրչի յիշատակարանը.

Ով լուսաւոր և ս՞ր հոգի, երկու կենաւք երանելի, հոչակաւոր և անուանի տ՞ը Աւետիք մեծ բարունի, արեգական նման պայծառ լուսաւորես զեկեղեցի և իրու ջուր հոսեալ գոլով աբրուցանես ծարաւածի: Արդ և ունիս երիս ի քեզ բան գովելի. զսերմանելն մ՞գէից, զառքելոցն կասողի (8), զվարդապետացն կերակրողի, զոր այժմ ի քէն կու կերակրի: Արդ ես քաղց՞լս և ծարաւիս ի քէն հայցեմ աղերսալի, զի զսովեալըս կերակրես յանմահական կենաց բանի և զծարաւիս զովացուցես ի յաղերէն անսպառելի, Ես Խաչատուր մեղօք ի լի և պարտապան բիւր քանքարի. չեմ արժանի զքեզ զովելոյ, քանզի և չեմ հմուտ բանի, այլ և զսէր սրտի իմոյ փոքր ի շատէ քեզ ծանուցի, զայս սակաւ գիրս գրեցի, զի յիշեսցես զիս ի բարի: Ամէն ամէն և եղիցի:

Զեռագրի ուղղագրութիւնը պահել ենք անփոփոխ, բանալով միայն «Թիւն» և «Թեան» վերջաւորութիւնները: Ուղղանկիւն փակագծի մէջ առնուածները մենք ենք աւելացնում:

Գարեգին ծ. Հվարդապետ.